ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՄԱՆ ԷԴՄՈՆԴԻ

ՄՐՑԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ՖՈՒՏԲՈԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Հոգեբանական գիտությունների թեկնածու

Հարություն Արտավազդի Բաբայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր

Արսեն Բաղդասարի Լոքյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու

Անահիտ Գուրգենի Ստեփանյան

Առաջատար կազմակերպություն՝ «**Ուրարտու**» գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի հունիսի 18-ին, ժամը 12^{30}-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2019 թվականի մայիսի 7-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների դոկտոր Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Որպես ամենազանգվածային մարզաձև՝ ներկայիս ֆուտբոլի զարգացման և դիտարժանության անհրաժեշտ պայմաններից է հանդիսանում մրցավարական գործընթացի արդյունավետ կազմակերպումն ու անցկացումը: Ֆուտբոլի մրցավարի գործունեությունը յուրահատուկ է և բարդ: Այն ընթանում է ժամանակի սղության և անկանխատեսելի խոչընդոտների պայմաններում, ինչպես նաև մշտապես փոփոխվող, անկանխատեսելի և տարաբնույթ խաղային իրադրություններում, որոնք հաճախակի կարող են հանգեցնել մրցավարական սխալների, ինչն էլ նվազեցնում է մրցավարների պրոֆեսիոնալ պատրաստության հանդեպ մարզիկների և հանդիսականների վստահությունը, բարձրացնում մրցապայքարի լարվածությունն ու հանգեցնում իրավիճակային միջադեպերի: Այս ամենի պատճառը շատ հաճախ ֆուտբոլի մրցավարների մասնագիտական պատրաստականության անբավարար մակարդակն է, և պայմանավորված է անձի հոգեբանական առանձնահատկություններով ու ընդունակություններով:

Ինչպես նշում են Վ. Բ. Մյակոնկովն ու Ն. Ա Նիկոլաևը, մրցավարի մասնագիտական կարևոր հատկությունների՝ անձի հոգեբանական գործընթացների և ընդունակությունների թվին կարելի է դասել միայն այնպիսիները, որոնք սերտ փոխկապակցվածության մեջ են գտնվում կոնկրետ գործունեության արդյունավետության ցուցանիշների հետ: Ինչպես անձի հոգեբանական գործընթացներն ու ընդունակությունները, այնպես էլ գործունեության հաջողության ցուցանիշներն ուսումնասիրելիս ի հայտ են գալիս մեթոդաբանական բնույթի որոշ հիմնախնդիրներ (հոգեբանական գործընթացներն ու ընդունակություններն ուսումնասիրելիս՝ դրանց ընտրության, իսկ գործունեության հաջողությունն ուսումնասիրելիս՝ դրանց ախտանշանների, այսինքն գործունեության որակական բնութագրերի հետ կապված):

Մրցավարի հոգեկան հուսալիության հիմնախնդրի ուսումնասիրությունը արդիական է հատկապես այն պատճառով, որ սպորտում, մասնավորապես ֆուտբոլում նրանց գործունեությունը բնութագրվում է այնպիսի ծայրահեղ պայմաններով (ժամանակի սղություն, բնակլիմայական պայմաններ, ներքին և արտաքին զանազան խոչընդոտներ), որոնք կարող են պայմանավորել մրցավարական գործունեության հուսալիության նվազումը: Հետևաբար, մրցակցական գործունեության բարձր պահանջներին համապատասխանելու համար ինչպես ֆուտբոլիստներին, այնպես էլ ֆուտբոլի մրցավարներին անհրաժեշտ է անցնել հատուկ պատրաստություն: Սակայն մեր դիտարկումները թույլ են տալիս փաստել, որ մրցավարության որակն ու հուսալիությունը մեծամասամբ նվազում են ֆուտբոլի մրցավարների հոգեբանական պատրաստության մշակված մեթոդիկայի բացակայության պատճառով, ինչին նույնպես միտված է մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ֆուտբոլի մրցավարի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համալիր ուսումնասիրության միջոցով

բացահայտել վերջիններիս մրցավարական գործունեության հուսալիությունն ապահովող հոգեբանական բաղադրատարրերը, բացահայտել մրցավարների մասնագիտական պատրաստության համակարգի կառուցվածքային հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ ֆուտբոլի մրցավարի հուսալի գործունեությունը հնարավոր կլինի ապահովել, եթե նրա համալիր պատրաստության համակարգում ներառվի հոգեբանական ոլորտը, մասնավորապես՝ մրցավարական գործունեության համապատասխան նրանց հոգեշարժիչ (ռեակցիա), անձնային փոխկապակցված ընդունակությունների և հատկությունների (վճռականություն, համարձակություն, հուզական կայունություն, սթրեսակայունություն) ինչպես նաև հոգեկան ֆունկցիաների (պատկերային և իրավիճակային հիշողություն, ուշադրություն) համալիրը:

Հետազոտության խնդիրները.

1. Տեսականորեն համապարփակ վերլուծել հուսալիության հիմնախնդրի ուսումնասիրման վերաբերյալ առկա ամենատարբեր մոտեցումներն ու հայեցակետերը, դուրս բերել մրցավարների և մրցավարական գործունեության հուսալիության հոգեբանական բաղադրատարրերը:
2. Տեսական վերլուծության միջոցով պարզաբանել ֆուտբոլի մրցակցային գործունեության կառուցվածքային յուրահատկությունները և մրցավարի պատրաստականությանը ներկայացվող արդի պրոֆեսիոնալ պահանջները:
3. Տեսական և փաստական վերլուծության միջոցով պարզաբանել և հիմնավորել ֆուտբոլային բուն մրցումներում մրցավարների կողմից սխալ որոշումների կայացման պատճառներն ու հետևանքները:
4. Լաբորատոր բնական պայմաններում ախտորոշել ֆուտբոլի տարբեր որակավորման մրցավարների հոգեշարժիչ և անձնային գործոնները, վերլուծել դրանց դրսևորման առանձնահատկությունները:
5. Մաթեմատիկական վիճակագրական վերլուծության միջոցով բացահայտել որակավորման տարբեր աստիճան ունեցող մրցավարների անձնային, հոգեշարժիչ ընդունակությունների և հոգեկան հուսալիության գործոնների առավել հավաստի կապերն ու դրանց նշանակությունը:
6. Փորձարարական ուսումնասիրություններից ստացված արդյունքներով հիմնավորել ներկայիս ֆուտբոլի մրցավարի պրոֆեսիոնալ պատրաստության համակարգում հոգեբանական պատրաստության անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել ֆուտբոլի մրցավարը և մրցավարական գործունեության հուսալիության դրսևորումները վարպետության տարբեր մակարդակներում:

Հետազոտության առարկան հանդիսացել են ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիության ապահովման կառուցվածքային և գործոնային բաղադրամասերն ու մեխանիզմները:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ֆուտբոլի մրցավարների գործունեության հոգեկան հուսալիության հետազոտության մեր

մեթոդաբանությունը համահունչ է Բ. Ֆ. Լոմովի և նրա հետևորդների գործունեության հուսալիության մշակած համակարգային մոտեցման հիմնական սկզբունքներին, որոնք հետագայում իրենց արտացոլումն են գտել Դ. Նորմանի, Ջ. Ռեյսոնի և այլոց աշխատանքներում: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել Ա. Ն. Լեոնտևի գործունեական մոտեցումը, արտակարգ իրավիճակներում գործունեություն ծավալող մասնագետների, այդ թվում՝ նաև մարզիկների գործողությունների հոգեկան հուսալիության բարձրացման մասին Վ. Դ. Նեբիլիցինի, Վ. Վ. Կորենբերգի, Յու. Մ. Բլուդովի, Վ. Ա. Պլախտիենկոյի, Յու. Ի. Սմիրնովի, Վ. Է. Միլմանի և Ն. Ա. Խուդադովի, Գ. Ս. Նիկիֆորովի, աշխատանքները, ինչպես նաև սխալների և սխալ գործողությունների մասին տեսակետները (Մ. Ա. Կոտիկ, Ա. Մ. Եմելյանով, Ն. Դ. Զավալովա, Վ. Ա. Պոնոմարենկո, Գ. Մ. Զարակովսկի, Վ. Ի. Մեդվեդև, Ա. Կ. Բոլոտովա, Ռ. Լ. Գրեգորի, Հ. Լեյբովից և այլք):

Աշխատանքում կիրառվել են հետազոտական հետևյալ մեթոդները.

- մասնագիտական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն,
- հարցաթերթիկային հարցում (հեղինակային հարցարան),
- բնական դիտում և տեսադիտում (մարզումային և մրցումային պայմաններում, աշխարհի առաջնության հանդիպումների ձայնագրված տեսագրությունների վերլուծություն),
- հոգեբանական թեստավորում,
- գործիքային հոգեֆիզիոլոգիական ախտորոշում (հոգեկան գործընթաց-ների և հոգեշարժողական ցուցանիշների ուսումնասիրում),
- մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Կատարված հետազոտության շրջանակում

- բացահայտվել է, որ տարբեր որակավորում ունեցող մրցավարների հոգեբանական պատրաստության վիճակի ձևավորման կառուցակարգերն ու հիմքերն իրենց զարգացվածության մակարդակով ու դրսևորման օրինաչափություններով մասնագիտական կատարելագործման առանձին փուլերում տարբեր են,
- տեսականորեն և փորձարարական ճանապարհով հիմնավորվել և հստակեցվել է ֆուտբոլի մրցավարների գործունեության հուսալիության ապահովման մեթոդական մոտեցում, որի համար հիմք են հանդիսացել ֆուտբոլի մրցավարների հոգեշարժիչ ընդունակությունների, հոգեկան հատկությունների, անձնային գործոնների տվյալները, նրանց հոգեկան հուսալիության, սթրեսակայունության և մրցավարության ընթացքում թույլ տված սխալների ուսումնասիրությունները, և դրանց համեմատական վերլուծությունը միջազգային կարգի մրցավարների նմանատիպ ցուցանիշների հետ,

- անկետային վերլուծության, ինչպես նաև դիտումների արդյունքում պարզվել է, որ հոգեբանական բնույթի մրցավարական սխալներն առավելապես տեղի են ունենում տուգանային հրապարակներում, և առաջարկում ենք ֆուտբոլի տերմինաբանություն ներմուծել ու այսուհետ մարզական գիտամեթոդական գրականության մեջ կիրառել որոշումների կայացման «արտակարգ էքստրեմալության գոտի» տերմինը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մրցավարի հոգեկան հուսալիության հիմնախնդրի հետազոտությունը տեսական մեծ նշանակություն ունի մրցավարական գործունեության կառավարման և հոգեբանական կարգավորման օրենքների, աշխատանքային ակտիվության անհատական-հոգեբանական որոշիչների իմացության, խնդրահարույց իրադրությունների տեղեկատվական նշանների գնահատման հարցում հոգեկան ճանաչողական գործընթացների ունեցած դերը որոշելու, անձի վարքային (աշխատանքային) ակտիվության հարցերը, ինչպես նաև գործառական վիճակների ինքնակարգավորման գործընթացներն ուսումնասիրելու տեսակետից:

Կատարված հետազոտության տեսական նշանակությունը կայանում է ֆուտբոլային գործունեության և դրա հաջող իրականացման նկատմամբ ֆուտբոլի մրցավարների կողմից ցուցաբերվող վերաբերմունքի, անձնային հատկությունների դրսևորման, հոգեկան հուսալիության աստիճանի և դրանց փոխկապակցվածության ուսումնասիրման մեջ: Գիտականորեն հիմնավորվել է նաև ֆուտբոլի մրցավարի հոգեբանական պատրաստության համակարգված համալիր մոտեցումը:

Կարծում ենք, որ ստացված արդյունքները կարող են տեսամեթոդական հիմք հանդիսանալ ֆուտբոլի մրցավարի հոգեբանական պատրաստության ուսումնա-մարզական գործընթացի կառուցման համար, ինչպես նաև լրացնել սպորտի հոգե-բանության համապատասխան բնագավառում նկատվող տեսական գիտելիքների պակասը:

Կիրառական նշանակությունը: Հետազոտության կիրառական նշանակությունն այն է, որ ֆուտբոլի մրցավարների մասնագիտական պատրաստության և կատարելագործման գործընթացում հոգեբանական պատրաստության համակարգված մեթոդների կիրառումը կապահովի. ա) ֆուտբոլի մրցավարների ընդհանուր և հատուկ հոգեբանական պատրաստության կտրուկ աճ, բ) հոգեշարժարժիչ գործընթացների, հոգեկան ընդունակությունների, անձնային տվյալների բարձրացում, սթրեսակայունության, արտակարգ ու դժվարին իրավիճակներում հուսալի գործունեության ապահովում, ամենատարբեր բարդ իրավիճակների կանխազգում և ճիշտ գնահատում:

Ստացված արդյունքները կարող են հաջողությամբ կիրառվել ինչպես սկսնակ մրցավարների նախապատրաստական խմբերում, այնպես էլ մրցավարական տարբեր կարգ և դասակարգում ունեցող ֆուտբոլի մրցավարների շրջանում:

Պաշտպանության առաջադրվող դրույթները:

1. Ֆուտբոլի մրցավարի հոգեկան հուսալիությունը բնութագրվում է որպես հոգեբանական պատրաստականության վիճակի կառուցվածքային առաջատար բաղադրամաս՝ ներառելով հուզական դիմացկունություն, կայունություն, արգելքադիմացկունություն, որոշումների կայացման վճռականություն, հոգեշարժիչ և սթրեսակայուն գործոնների ցուցանիշներ:

2. Ֆուտբոլի մրցավարի պատրաստության առաջարկվող մոտեցումը և գործիքային, թեստավորող-ախտորոշիչ մեթոդիկաների նման զուգակցումով առաջին անգամ կիրառված համալիրը հանդիսանում է ֆուտբոլի մրցավարի կատարելագործման տարբեր փուլերի գիտականորեն հիմնավորված մեթոդական հիմքը:

3. Մրցավարի հոգեկան հուսալիության մակարդակի աճը և նրա ֆիզիկական ու հոգեկան գործառույթների հարմարվողականությունն ու կայունությունը պայմանավորում են մրցավարական գործունեության հուսալիության հոգեբանական ապահովումը, իրավիճակային գործոն ներառող խաղային տարբեր իրադրություններում մրցավարների արագ և անսխալ որոշումների կայացումը:

4. Հայաստանում գործող ֆուտբոլի մրցավարների պատրաստության ներկայիս համակարգում հոգեբանական պատրաստության անհապաղ ներդնումն ու իրագործումն ունի ակնհայտ կիրառական նշանակություն և արդյունավետություն մրցավարական տարբեր ստաժ ու կարգ ունեցող թե՛ արական և թե՛ իգական սեռի ներկայացուցիչների ուսումնամարզական գործընթացի կազմակերպման աշխատանքում:

Հետազոտության հավաստիությունն ու փորձաքննությունը: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված են հետազոտվողների քանակակազմի բավականաչափ ծավալով, առաջադրված խնդիրների լուծման համար համապատասխան մեթոդների հուսալիությամբ և վալիդ մեթոդիկաների կիրառմամբ:

Հետազոտության արդյունքները պարբերաբար զեկուցվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, տպագրվել մասնագիտական պարբերականներում ու ժողովածուներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ներկայացվող ատենախոսական աշխատանքը շարադրված է 147 համակարգչային էջի վրա, կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, մեթոդական առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Օգտագործված գրականության ցանկը կազմված է 223 գրական աղբյուրներից: Ատենախոսության տեքստում ներկայացված են 25 աղյուսակներ, 10 նկարներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան և տեսական ու մեթոդական հիմքերը: Պարզաբանված են աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունները, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

«*Մրցավարի հոգեկան հուսալիության հիմնախնդրի տեսական վերլուծություն*» և «*Սպորտային մրցակցության և մրցավարության հոգեբանական առանձնահատկությունները*» խորագրով գլուխները նվիրված են հուսալիություն եզրույթի և մրցավարության մասին ընդհանուր պատկերացումների քննարկմանը: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից՝ «*Հուսալիություն հասկացության տեսակների բովանդակային մեկնությունը*», «*Հոգեկան հուսալիության հետազոտման հիմնախնդիրները սպորտում*», «*Մրցավարական գործունեության հուսալիության հիմնական բնութագրերը*»:

Այս գլխում փորձ է արվել հիմնովին բացատրել հուսալիություն տերմինը, դրա շուրջ տարբեր հետազոտողների արտահայտած մտքերն ու բացատրությունները: Մասնավորապես՝ օրինակներ են բերված տարբեր բնագավարների անվանի գիտնականներից, ինչպիսիք են Վ. Դ. Նեբիլիցինը, Վ. Ա. Բոդրովը, Վ. Յ Օռլովը, Վ. Մ. Կրուկը, Դ. Զերնը, Վ. Խակկերը, Ա. Ի. Գուբինսկին, Մ. Ա. Կոտիկը, Վ. Ա. Պլախտիենկոն, Բ. Ֆ. Լոմովը, Գ. Ս. Նիկիֆորովը, Ա. Ա. Մարկոսյանը, Հ. Ա. Բաբայանը, Վ. Ղ. Գեղամյանը, Հ. Ռ. Հովհաննիսյանը և նույնիսկ Կոնֆուցիոսն ու Սուվորովը: Առաջին ենթագլխում բացատրություն է տրվել սպորտում առավել հանդիպող հուսալիության տեսակների առանձնահատուկ դրսևորումներին, ինչպիսիք են՝ սուբյեկտի հուսալիություն, հոգեկան հուսալիություն, հոգեշարժիչ հուսալիություն, հոգեկան կայունություն, հոգեկան դիմացկունություն և հոգեկան կարգավորում հասկացությունները:

«*Հոգեկան հուսալիության հետազոտման հիմնախնդիրները սպորտում*» ենթագլխում փորձ է արվել դեդուկտիվ միջոցով ընդհանուր հոգեբանության հուսալիության ակունքներից անցում կատարել սպորտ և ներկայացնել մինչ օրս անվանի գիտնականների կողմից այս ուղղությամբ կատարված աշխատանքները: Օրինակներ են բերվել ինժեներական հոգեբանությունից, կենսաբանությունից, ֆիզիոլոգիայից, և իհարկե սպորտի տարբեր ձևերից:

Նեղ մասնագիտական մանրազննին վերլուծության է ենթարկվել «*Մրցավարական գործունեության հուսալիության հիմնական բնութագրերը*» *ենթագլուխը:* Հետազոտելով և վերլուծելով տեսական ու գործնական բավականին տեսակետներ՝ եկանք այն եզրակացության, որ ֆուտբոլի մրցավարների գործունեության դրական արդյունք ակնկալելու համար բացի նախասիրություններից, հետաքրքրություններից, ունակություններից, հոգեբանական ու հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններից, նախ և առաջ անհրաժեշտ է մրցավարական

գործունեության նպատակների հստակություն, ֆուտբոլի կանոնների հստակ իմացություն, մրցավարի օգնականների և մրցավարի փոխհամաձայնեցված գործակցություն, մրցավարության ճիշտ մեթոդիկա և ոճ, խաղային իրավիճակների համարժեք գնահատում:

Տեսական մասը կազմող երկրորդ՝ «*Սպորտային մրցակցության և մրցավարության հոգեբանական առանձնահատկությունները*» գլուխը նույնպես կազմված է երեք ենթագլխից և առավելապես նվիրված է ֆուտբոլի մրցավարների՝ գործունեության ընթացքում հնարավոր սխալների տեսամեթոդական ուսումնասիրմանը:

«*Ֆուտբոլի մրցավարի գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները*» ենթագլխում նշվում է ֆուտբոլի մրցավարության գործունեության դժվարությունների և հոգեբանական բնույթի սխալների մասին: Օրինակներ են բերված այնպիսի մրցավարական սխալներից, որոնք նույնիսկ սկսնակ մրցավարները չէին կարող թույլ տալ, բայց խաղի գերլարվածության ֆոնին, մասնավորապես, անգլիացի շատ հայտնի մրցավարներից մեկը երեք դեղին քարտ ցույց տալուց հետո է միայն հեռացրել ֆուտբոլիստին (մրցման կանոններով երկրորդից հետո է պարտավոր դա անել):

«*Ֆուտբոլի մրցավարի գործունեության որակի և արդյունավետության վրա ազդող գործոնները*» ենթագլխում նշվում է, որ մրցավարի վրա ազդում են բնական, վարքային, ներքին և այլ գործոններ: Բացի վերոնշյալներից, գիտամեթոդական գրականության մեջ առանձնացվում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են թիմերի, մրցակիցների կազմի՝ նրանց մակարդակի, մարզվածության աստիճանի, ուժեղ և թույլ կողմերի մասին տեղեկացվածությունը, մրցավարի հիմնական մասնագիտական գործունեությունը, վարպետությունը և այլն, որոնք ընդունված է դիտարկել որպես այլ գործոններ:

Ֆուտբոլի մրցավարների հետազոտությամբ զբաղվող Մ. Ա. Կուզմինը բացահայտել է ֆուտբոլի մրցավարների գործունեության հաջողությունը պայմանավորող որոշ հոգեբանական առանձնահատկություններ: Այսպես, բարձր որակավորում ունեցող մրցավարների մոտ հեղինակը բացահայտել է բարձր դիմացկունություն, այսինքն՝ ձգտում մեծ բեռնվածության աշխատանքի հանդեպ: Այն մրցավարների մոտ, որոնց կարիերայի աճը կանգ է առել, սույն բնութագիրը թույլ է արտահայտված: Բացի այդ, բարձրակարգ մրցավարների բանականության (ինտելեկտի) մակարդակը ավելի բարձր է, քան աճի հեռանկար չունեցողներինը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջինների մոտ ընդհանուր տեղեկացվածությունը, ընդհանրացնելու, հասկացությունների միջև տրամաբանական կապեր սահմանելու և օրինաչափություններ դուրս բերելու կարողությունը ավելի բարձր է, քան երկրորդների մոտ:

«*Մրցավարի հոգեբանական պատրաստության առանձնահատկությունները*» ենթագլխում մանրամասը նշվում են այն գործոններն ու առանձնահատկություն-ները, դրանք զարգացնելու ձևերը, որոնց պետք է տիրապետեն ֆուտբոլի

մրցավարները հաջողության հասնելու համար: Դրանք և ընդհանուր են, և անձնային:

Ընդհանուր առանձնահատկություններից են այնպիսի հոգեկան հատկանիշներ, ինչպիսիք են ուշադրության կենտրոնացումն ու տեղափոխելիությունը, տեսադաշտի արդյունավետ ծավալն ու տեսողական ընկալումը, արագ և օպերատիվ մտածողությունը, հուզական կայունությունն ու բարձր ինքնատիրապետումը: Ընդհանուր և հոգեբանական պատրաստությունը մրցավարները ձեռք են բերում շուրջտարյա մարզումների ընթացքում: Այն բովանդակում է մրցավարների բարոյական հատկանիշների և կամային հատկությունների դաստիարակումը, տարածության և շարժման ընկալումների ձևավորումը, ուշադրության ծավալի, կայունության, բաշխման և տեղափոխման, հիշողության, ինչպես նաև ինքնավերահսկողության և ինքնակարգավորման, սեփական հույզերը կառավարելու ընդունակության զարգացումը:

Անձնական առանձնահատկություններից են՝ աշխատասիրությունը, կարգապահությունը, պատասխանատվությունը, արդարությունը, բարությունը, ազնվությունն ու պարտաճանաչությունը:

Ատենախոսության *երրորդ՝* «*Ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիության հոգեբանական ցուցանիշների հետազոտության կազմակերպումն ու տեխնոլոգիաները*» գլխում ներկայացված է հետազոտության կազմակերպումը, ընտրված մեթոդիկաների, մեթոդների և հետազոտական ընտրանքի հիմնավորումները:

Կիրառված մեթոդների ու մեթոդիկաների ընտրությունը բխել է ընտրված մեթոդաբանական հիմքերից, ուսումնասիրության առարկայից, նպատակից և խնդիրներից: Մեթոդիկաներն ու մեթոդներն ընտրելիս հաշվի են առնվել այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են մեթոդի համարժեքությունը ուսումնասիրության օբյեկտին, խնդիրներին, վստահելիությունը, համապատասխանությունը գիտական հետազոտությունների ժամանակակից պահանջներին և հետազոտության տրամաբանական կառուցվածքին: Լաբորատոր-գործիքային հետազոտության շրջանակում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝ զգայաշարժողական հակազդումների (ռեակցիաների) ուսումնասիրում՝ պարզ շարժողական ռեակցիա (ՊՇՌ), բարդ շարժողական ռեակցիա (ԲՇՌ) և ռեակցիա շարժվող օբյեկտի նկատմամբ (ՇՕՌ), տեսադաշտի ծավալի հետազոտման մեթոդիկա (պերիմետ-րիա), տարածության հոգեկան ընկալման մեթոդիկա (Հորվարդի աչքաչափի քանոն), ուշադրության փոխադրումը կամ դինամիկ ուշադրության ծավալը որոշող «Շուլտեի աղյուսակները» մեթոդիկա, տեսողական հիշողության ուսումնասիրման մեթոդիկա (համակարգչայնացված և վերափոխված տարբերակ):

Կիրառվել են նաև Ռ. Բ. Քեթթելի բազմագործոն հարցարանի (16 անձնային գործոններ) 187 հարցանի տարբերակը, Վ. Է. Միլմանի մրցակցային հուսալիության հարցարանի մեր կողմից վերափոխված տարբերակը, «մտածողության տեսակը» բացահայտող թեստ: Բնական, փակ դիտում (մասնագիտական բնականոն գործունեության պայմաններում), լաբորատոր դիտում (տեսադիտում):

Ատենախոսության չորրորդ գլուխը նվիրված է «*Ֆուտբոլի մրցավարի մասնագիտական պատկերացումների, հոգեշարժիչ ոլորտի և առանձին հոգեկան գործընթացների ուսումնասիրության արդյունքներին*»**:** Այս գլխում զետեղված են հեղինակի կողմից կազմված հարցաթերթիկային հարցման մեթոդներով ստացված և մանրազննին քննարկված տվյալները, ինչպես նաև Հայաստանի ու միջազգային որակավորման առաջատար մրցավարների համեմատական վերլուծությունն ու լաբորատոր-գործիքային մեթոդներից ստացված արդյունքների քննարկումը:

«*Մրցավարի մասնագիտական կողմնորոշման սուբյեկտիվ ցուցանիշների վերլուծություն*» ենթագլխից պարզ է դառնում, որ հետազոտվածները ֆուտբոլի մրցավարի մասնագիտությունն ընտրել են բացառապես սիրելով ֆուտբոլը: Իհարկե կային նաև պատասխաններ, որտեղ հարցվողները նշում էին մրցակցային իրավիճակների ճիշտ գնահատումը և մեկնաբանումը, ֆուտբոլային մրցապայքարի արդյունավետ ու արդար ընթացքին նպաստելու ցանկությունը պատասխանները, սակայն միևնույն է գերակշռողը սերը ֆուտբոլի նկատմամբ պատասխանն էր: Ֆուտբոլի մրցավարի մասնագիտական և հոգեբանական պատկերացումները բացահայտող 18 հարցանի հարցաթերթի էությունն էր ի հայտ բերել հետազոտվողների մասնագիտական, սպորտային կարևոր հատկանիշների և հոգեբանական բնույթի գիտելիքներն ու պատկերացումները: Առաջին խմբի հարցերի պատասխաններից պարզ դարձավ, որ հայ մրցավարները շատ ավելի լուրջ են վերաբերվում իրենց մասնագիտությանը, քան միջազգային որակավորում ունեցող մրցավարները: Եթե նույնիսկ շատ զարգացած երկրներում անվանի խաղավարների մի մասը ֆուտբոլի մրցավարությունը համարում է հոբբի կամ հաճելի զբաղմունք և ունի ասենք ատամնաբույժի, իրավաբանի կամ տնտեսագետի մասնագիտություն, ապա հայ մրցավարներն իրենց գործը համարում են մասնագիտություն: Սակայն գործնականում որպես հոբբի ընկալող մրցավարները շատ ավելի հաջող են դրսևորում իրենց խաղադաշտում, քան հայ մրցավարները: Հարցերի երկրորդ խումբը ուղղված էր պարզելու մրցավարի պատկերացումները մասնագիտական պատրաստության վերաբերյալ: Ըստ այդմ, նրանց մեծ մասը պնդում է, որ ֆուտբոլի մրցավարությունում առավել կարևոր են կանոնների իմացությունն ու ֆիզիկական պատրաստականությունը: Ըստ հարցման արդյունքների, ոչ պակաս կարևոր է մրցավարի հոգեբանական պատրաստությունը: Այդ տեսակետն ավելի են կիսում հատկապես կարգով ավելի բարձր մրցավարները: Նրանց 75 % կարծում է, որ հոգեբանական պատրաստությունը շատ է կարևորվում մրցավարությունում: Պատասխաններում, մասնավորապես, կարևորվել են մրցավարի համարձակությունը, վճռականությունը, ինքնատիրապետումը, կայունությունը, կենտրոնացվածությունը, տեսողական հիշողությունը, ըմբռնման արագությունը, մտածողության տեմպը, որոշ դեպքերում նաև բնավորությունը: Հետազոտվող մրցավարները նշել են նաև, որ ամենից շատ սխալներ թույլատրվում են տուգանային հրապարակներում և դրա մատույցներում, ինչը ուղղակիորեն ապացուցվեց մեր կողմից կատարված բնական դիտման և տեսադիտման արդյունքներում:

«Հայաստանի և միջազգային որակավորման առաջատար մրցավարների սխալների ու դրանց պատճառների համեմատական վերլուծություն» ենթագլխում վերլուծություն է արվել 2014 թվականի աշխարհի առաջնության 64 հանդիպումներն սպասարկած մրցավարների և գրեթե նույն ժամկետներում Հայաստանի բարձրագույն, առաջին և տարբեր պատանեկան առաջնություններ սպասարկած մրցավարների միջև: Գրանցումներ են իրականացվել 2014 թվականի ԱԱ 64 հանդիպումների և Հայաստանի տարբեր առաջնությունների 100 հանդիպումների վերաբերյալ:



Նկար 1 Մրցավարական սխալները ըստ խաղադաշտի հատվածների

Արդյունքների ամփոփումը արձանագրեց, որ ԱԱ խաղերի ընթացքում մրցավարները կայացրել են 1898 որոշում, որոնցից 200-ը սխալ կամ անհամապատասխան (համաձայն՝ մրցավարական միջազգային կանոնակարգի): Փաստորեն որոշումների 10,5 %-ը սխալ: Հայ մրցավարները 100 հանդիպումներում կայացրել են 3100 որոշում, որոնցից 308-ը սխալ, այսինքն 9,9 %-ը: Առաջին խումբը կազմել են 5 տարուց ավելի ստաժ և բարձր որակավորում ունեցող մրցավարները, և նրանց կողմից 50 հանդիպումներում կայացվել է 1510 որոշում, որից 140-ը սխալ: Մինչև 5 տարի ստաժ և համեմատաբար ցածր որակավորում ունեցող մրցավարները վարած 50 խաղերում կայացրել են 1590 որոշում, որից 170-ը սխալ: Այսինքն առաջին խմբի մրցավարների սխալները կազմել են 9,2 %, իսկ երկրորդ խմբինը՝ 10,8: Սխալները վերլուծվել են նաև ըստ խաղադաշտի հատվածների (նկ. 1):



Նկար 2. Մրցավարների սխալների տոկոսային ներկայացվածությունը

Աշխարհի առաջնության սխալների վերաբերյալ մեր վերլուծության ամբողջական տվյալները ցույց են տալիս, որ սխալների 60 տոկոսը լինում են երկրորդ խաղակեսում: Իսկ հայ մրցավարների մոտ երկրորդ խաղակեսում սխալների տոկոսն ավելի բարձր է: Դա հատկապես նկատելի է դառնում խաղավերջում: Սխալներն ըստ ժամանակահատվածի հետևյալ տեսքն ունեն՝ 1-30-րդ րոպեների ընթացքում 26-28%, 31-60՝ 28-32%, 61-90՝ 40-46 տոկոս (նկ. 2):

«*Մրցավարի գործունեության արդյունավետության առավել յուրահատուկ հոգեբանական գործոնների վերլուծություն*» ենթագլխում խնդիր էր դրվել ի հայտ բերել մրցավարի գործունեության այնպիսի գործոններ, ինչպիսիք են հոգեշարժիչ հատկությունները՝ պարզ և բարդ շարժողական հակազդումները, շարժվող օբյեկտի նկատմամբ հակազդումը, մտածողությունը, ուշադրության փոխադրումը, տեսողական հիշողությունը, տեսողական ըմբռնումը, ինչպես նաև տեսադաշտի ծավալը:

Հետազոտության նպատակով կիրառված լաբորատոր մեթոդները համապատասխանեցված են ֆուտբոլի մրցավարի գործունեությունում հաճախ հանդիպող այնպիսի իրավիճակների, ինչպիսիք են ծայրահեղ պայմաններում և սթրեսային իրավիճակներում ինքնատիրապետումը չկորցնելու և արագ ու ճիշտ որոշում կայացնելու ունակությունները:

Ատենախոսության հինգերորդ գլուխը կոչվում է «*Մրցավարի անձի մասնագիտական գործունեության հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծություն*»: Այս գլխում ներկայացված են հիմնական հետազոտական արդյունքներն ու ցուցանիշները, դրանց համեմատական վերլուծությունը:

«*Ֆուտբոլի մրցավարի անձնային հատկությունները որպես մրցավարական գործունեության հաջողության գործոն*» ենթագլխում ներառված են Բ. Քեթթելի բազմագործոն հարցարանի տվյալները: Հետազոտությանը մասնակցել են ֆուտբոլի Հայաստանի առաջնությունները սպասարկող 40 մրցավարներ, որոնք բաժանվել են երկու խմբի: Բարձրակարգ մրցավարների խմբում (Ա) ընդգրկվել են 5 տարուց ավելի մրցավարական ստաժ ունեցող 20 մրցավար: Ցածր որակավորման մրցավարների խմբում (Բ) ընդգրկվել են մինչև 5 տարի ստաժ ունեցող 20 մրցավար: Ցուցանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ բոլոր գործոնների առումով խմբերի միջև կան տարբերություններ, որոնցից ընդամենը ինը ցուցանիշների պարագայում է, որ հավաստիության մակարդակն ապահովված է: Առավել ցայտուն տարբերություններ են արձանագրվել՝ հուզական անկայունություն–հուզական կայունություն (d=2.45), ենթարկվողականություն–գերակայություն (d=2.2), հույզերի ենթարկվածություն-վարքի բարձր նորմատիվություն (d=2.35) և գործնականություն-երևակայություն (d=3.4) անձնային գործոններից:

Երկու խմբերում էլ անձնային գործոնների շարքում առավել բարձր ցուցանիշներ են ստացել մրցավարների համարձակությունն ու հուզական կայունությունը, ինչը որ շատ կարևոր է ֆուտբոլի մրցավարությունում: Բարձրակարգ մրցավարների մոտ երրորդ տեղում գերակայությունն է, անկախությունը, իսկ ցածրակարգերի մոտ՝ անզսպությունը: Այս հանգամանքը բացատրում ենք այն բանով, որ ժամանակի ընթացքում մրցավարները փորձ են ձեռք բերում, խաղադաշտում իրենց ավելի

վստահ են զգում, տիրապետում են իրավիճակին և խաղի ընթացքում թույլատրելի սահմանում իրենց են ենթարկում ֆուտբոլիստներին, մարզիչներին, նաև երկրպագուներին, ինչը թելադրում է խաղի բնույթն ու կանոնները: Իսկ ահա երիտասարդ մրցավարների մոտ թեև ղեկավարելու կարողությունը ևս պետք է զարգացած լինի, սակայն կապված այն հանգամանքի հետ, որ նրանք անփորձ են և ոչ ցանկալի չափի վճռական, հեղինակություններից ազդվելու վտանգ ունեն:

«*Ֆուտբոլի մրցավարների մտածողության յուրահատկությունները*» ենթագլխում ամփոփված են Գ. Վ. Ռեզապկինայի «Պրոֆիլային խմբերի ընտրությունը» մտածողության թեստի արյունքներն, ըստ որի արձանագրվեց, որ հայ մրցավարների մոտ ավելի զարգացած է բառատրամաբանական մտածողությունը:

«*Մրցակցային հոգեկան հուսալիության ցուցանիշները որպես ֆուտբոլի մրցավարի գործունեության արդյունավետության կարևոր բաղադրիչներ*» ենթագլխում ներկայացված են մրցավարի հոգեկան հուսալիության ցուցանիշները:

Հետազոտությունից պարզ դարձավ, որ հետազոտված երկու խմբերի մրցավարների մոտ հոգեկան հուսալիությունը գտնվում է նորմայի սահմանում և գրեթե բոլոր գործոններով երկու խմբերի հետազոտվողները հավասար արդյունքներ են ցույց տվել: Թերևս ցածր որակավորման մրցավարների մոտ որոշակի առավելություն է նկատվում դրդապատճառների էներգետիկ ոլորտի առումով: Այս հանգամանքը բացատրվում է այն բանով, որ սկսնակ կամ քիչ ստաժ ունեցող մրցավարների մոտ ակնհայտ է ՖԻՖԱ-ի մրցավար դառնալու մեծ ձգտումը: Իսկ բարձրակարգ մրցավարներից շատերի մոտ այդ դրդապատճառը կորցրել է իր ուժը:

«*Հետազոտական խմբերի միջև մրցավարի գործունեության հուսալիության առաջատար հոգեբանական գործոնների համահարաբերակցական կապերի համեմատական վերլուծություն*» ենթագլխում ներկայացված են այն բոլոր կարևոր հոգեբանական գործոնները, որոնք, ըստ հետազոտության վերլուծության արդյունքների անհրաժեշտ են մրցավարներին: Հետազոտության արդյունքների համահարաբերակցական կապերի վերլուծության նպատակով երկու խմբերի մրցավարների ցուցանիշներից ընտրվել են այնպիսինները, որոնք հետազոտված մյուս ցուցանիշների հանդեպ դրսևորել են համահարաբերակցական առավել արտահայտված կապ: Ա և Բ խմբերում առավելագույն բարձր կապեր է հաստատվել ***տեսողական հիշողություն*** գործոնի հետ (Նկ. 3, 4):

Այսպիսով՝ համահարաբերակցական հետազոտությունը պարզեց, որ Ա խմբի մրցավարների համար մասնագիտական գործունեության հուսալիության առավել կարևոր գործոններ են հանդիսացել տեսողական հիշողությունը՝ որպես հոգեկան գործընթաց, համարձակությունը՝ որպես անձնային գործոն, ներքին անորոշության սթրեսորները՝ որպես մրցակցային հոգեկան հուսալիության գործոն (Նկ. 3): Իսկ Բ խմբի մրցավարների համար կարևորվել են տեսողական հիշողությունը, անզսպությունը, արտաքին անորոշության սթրեսորները (Նկ. 4):

Որպես առաջնային գործոնների լրացում բարձր որակավորման մրցավարների խմբում կարևորվել են պարզ շարժողական, բարդ շարժողական և



- Առաջատար գործոններ

- Երկրորդական

Նկար 3. **Բ խմբում ընդգրկված Ֆուտբոլի մրցավարների համահարաբերակցական վերլուծության ուրվագիծը**

շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիաները, ուշադրությունը, արտաքին անորոշության սթրեսորները: Ցածր որակավորման մրցավարների խմբում որպես առաջնային գործոնների լրացում կարևորվել են ներքին և արտաքին իմաստավորված սթրեսորները, ուշադրությունը, բանականությունը, բառատրամաբանական մտածողությունը, ներքին անորոշության սթրեսորները, համարձակությունը, շարժվող օբյեկտի նկատմամբ և պարզ շարժողական ռեակցիաները:

Այսպիսով, ամփոփելով համահարաբերակցական վերլուծության արդյունքները, կարող ենք ասել, որ ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիության համար շատ կարևոր են հոգեկան գործընթացներն ու ընդունակությունները, մասնավորապես՝ տեսողական հիշողությունն ու ուշադրության կենտրոնացվածությունը: Անձնային գործոններից առաջնային են հատկապես համարձակությունը, հուզական կայունությունն ու բանականությունը:





- Առաջատար գործոններ

- Երկրորդական գործոններ

Նկար 4. **Բ խմբում ընդգրկված Ֆուտբոլի մրցավարների համահարաբերակցական վերլուծության ուրվագիծը**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները մեզ հնարավորություն են ընձեռում բխեցնելու հետևյալ եզրակացությունները.

1. Ֆուտբոլի մրցավարի գործունեության հոգեկան հուսալիությունը՝ բազմամյա մրցավարական գործունեության մեջ նախամրցումային և բուն մրցումային արտակարգ իրավիճակներում նրա՝ կայուն հոգեվիճակի և գործունեության բարձր մակարդակի անխափան ու արդյունավետ իրականացման երաշխիքն է:

2. Ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիությունը գործի է ընկնում անմիջականորեն խաղից առաջ, նրա՝ գիտակցված և չգիտակցված մակարդակներում դրսևորվող ինքնակարգավորման ընդունակությամբ:

2.1. Նախամրցումային վիճակի չգիտակցված կարգավորումը ապահովվում է Ֆուտբոլի մրցավարի հոգեբանական պատրաստության գործընթացում ձևավորված ավտոմատացված ծրագրերի իրագործման ճանապարհով:

2.2. Նախամրցումային վիճակների գիտակցված կարգավորումը հիմնված է մրցավարի՝ իր իսկ վարքի դրսևորումները և պատճառները վերահսկելու, պատկերային կերպարները նպատակաուղղված ստեղծելու, ուշադրությունը՝ ամենատարբեր օբյեկտների վրա կենտրոնացնելու և փոխադրելու, բացասական հոգեկան գրգռիչների ու գործոնների ներգործությունից շեղվելու, հուզական գրգռվածության և մկանային լարվածության վիճակի վրա ներգործելու հատուկ հնարների կիրառման ձևավորված կարողության վրա:

3. Մրցավարական գործունեության կայունությունն ու արդյունավետությունը ապահովվում է ֆուտբոլի մրցավարի հուսալիության բոլոր հոգեկան բաղադրիչների նպատակահարմար զուգակցմամբ:

3.1. Մրցավարի գործունեության հոգեկան հուսալիության մակարդակի բարձրացումն իրականանում է նրա հոգեբանական պատրաստության գործընթացում և նախատեսում է համակարգված հոգեբանամանկավարժական ներգործությունները փոխկապակցող հետևյալ ուղղությունները. ա) մրցավարի դրդապատճառային ոլորտի ձևավորում և այդ գործընթացի հետ կապված կամային պատրաստություն, բ) ինքնակարգավորման հնարների և վարժությունների ուսուցում, գ) մրցավարական անձնակազմի միջանձնային հարաբերությունների համակարգի և հոգեբանական մթնոլորտի լավարարում, դ) մրցավարի հոգեշարժիչ ընդունակությունների և շարժողական դիրքորոշումների համակարգի կատարելագործում:

4. Ֆուտբոլի մրցավարների որակավորման մակարդակի և մասնագիտական փորձառության աճին համընթաց ավելանում է նրանց վարքի բարձր նորմատիվությունը, անկախությունն ու գերակայությունը, հուզական կայունությունը, զարգանում է իդեոմոտորիկան (երևակայությունը): Ընթացքում նրանք դառնում են ավելի հաստատակամ, ուղղամիտ ու խիստ, քան նախկինում:

5. Ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիության համար ֆիզիկական և մասնագիտական ընդունակություններից զատ գերազանցապես կարևորվում են հոգեկան գործընթացները, մասնավորապես՝ ուշադրությունն ու տեսողական հիշողությունը, ինչպես նաև անձնային գործոնները՝ հատկապես համարձակությունը, հուզական կայունությունն ու բանականությունը:

6. Ֆուտբոլի մրցավարի բարձր աշխատունակությունն ու շարժողական գործունեության արդյունավետությունը բարձրացնող հոգեկան վիճակների և գործունեության կայունությունն ապահովվում է հոգեկան բաղադրիչների կուռ համալիրով, որը ներառում է՝ ա) մրցավարի շարժողական գործունեության արդյունավետության առաջատար ընդունակությունները (զգայաշարժողական և ինտելեկտուալ), բ) արդյունավետ արգելքադիմացկուն գործունեությանը նպաստող անձնային հատկությունները (նվաճումների դրդապատճառայնությունը, հավակնությունների մակարդակը, գերակայելու ձգտումը, հոգեկան դիմացկունությունը, հուզական կայունու-

թյունը), գ) սթրեսածին գործոնների ներգործության պայմաններում հոգեկան վիճակները կարգավորելու կարողությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Գևորգյան Ա. Է. «Ֆուտբոլային մրցավարի գործունեության հուսալիության հոգեբանական ապահովումը»-ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2014 թ, էջ 13-17

2.Գևորգյան Ա. Է. «Ֆուտբոլի մրցավարների որոշումների կայացման հուսալիության հոգեբանական գործոնները» - Материалы 19 международного научного конгресса Олимпийский спорт и спорт для всех, Ереван, 2015 «Ясон» ООО» 2015, էջ 232-236

3.Գևորգյան Ա. Է. «Ֆուտբոլի մրցավարների մարտավարական մտածողության կարևորությունը մասնագիտական գործունեությունում» «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան. «Էդիթ Պրինտ» 2015, էջ 84- 87

4.Գևորգյան Ա. Է. «Մրցավարական դպրոցներում և ֆիզկուլտուրայի բուհերում ֆուտբոլի մրցավարների պատրաստման արդիականացման ուղիները» - «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Ուսումնամեթոդական հոդվածներ 2016, էջ 292-296

5.Գևորգյան Ա. Է. Բաբայան Հ. Ա. «Ֆուտբոլի մրցավարների որոշումների կայացման վրա ազդող հոգեբանական գործոնները» - Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ #2 Երևան 2016, էջ 96 -102

6.Գևորգյան Ա. Է. «Համաշխարհային ֆինանսատնտեսական քաղաքականության բացասական ազդեցությունը ֆուտբոլի վրա» - «Այլընտրանք», եռամսյա գիտական հանդես 2016#3 հուլիս-սեպտեմբեր, էջ 251-256

7.Գևորգյան Ա. Է. «Ֆուտբոլի մրցավարի հոգեբանական պատրաստության առանձնահատկությունները»-Սպորտային մանկավարժական գիտությունը Հայաստանում, 43-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու ՖԿՀՊԻ, Երևան 2016, էջ 115-120

8. Գևորգյան Ա. Է. «Ֆուտբոլի մրցավարների հոգեբանական հարմարումը VAR (ՄՏՕ) համակարգին» - «Արդի հոգեբանություն» գիտական հանդես 2019 # 1, Երևան, «Անտարես», էջ 8-13

9.Геворгян А. Э. «Личностные качества футбольного арбитра как факторы успешности судейской деятельности» - Психология и педагогика 21 века: Теория, практика и перспективы. Сборник материалов III Международной научно-практической конференции. Чебоксары 2015, С.241-244

10.Геворгян А. Э. «Значение психомоторных качеств в системе психологической подготовки и отбора арбитров в футболе» - Материалы XI всероссийской научно-практической конференции с международным участием по психологии спорта и физической культуры «Рудиковские чтения - 2015» (3-4 июня 2015) Москва С. 28-31

11.Геворгян А. Э. «Психологические факторы, обеспечивающие надежную деятельность футбольного арбитра» -Կրթությունը և գիտությունը Արցախում, 2016, 3 էջ 8-15

12.Gevorgyan A. E. Football philosophy and psychology of refereeing-Սպորտային մանկավարժական գիտությունը Հայաստանում, 44-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու ՖԿՀՊԻ, Երևան 2017, էջ 375-381/

ГЕВОРКЯН АРМАН ЭДМОНДОВИЧ
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ, ОБУСЛАВЛИВАЮЩИЕ НАДЕЖНОСТЬ ДЕЯТЕЛЬНОСТИ АРБИТРА (НА ПРИМЕРЕ ФУТБОЛА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 - Общая психология, теория и история психологии, психология личности. Защита диссертации состоится 18 июня 2019 года в 12:30 на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010. Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Одна из главных проблем в мировом футболе-ошибки, которые допускают арбитры. С целью изучения основных причин ошибочности футбольных арбитров и была предпринята наша диссертационная работа. Выяснилось, что в некоторых случаях причиной низкого качества судейства, а в большинстве случаев неполноценной надежности действий футбольных арбитров является отсутствие обработанных методик для психологической подготовки судей, что и является основой актуальности нашей диссертационной работы.

Цель исследования. С помощью комплексного изучения индивидуально-психологических особенностей футбольных арбитров выявить психологические компоненты, обеспечивающие надежную судейскую деятельность последних, понять ключевые особенности профессиональной системной подготовки футбольных арбитров.

Гипотеза исследования. Предполагается, что надежность деятельности футбольной судьи возможно гарантировать, если в процессе системы комплексной подготовки включить психологическую состовляюшую, в частности, соответственно судейской деятельности, исследовать моторно-двигательные данные (разновидность реакций), личностые качества (решительность, смелость, эмоциональная стабильность, стрессоустойчивость) и психические качества (зрительная память, внимание).

Задачи исследования. 1. Проанализировать различные точки зрения теоретических основ и принципов исследования проблемы надежности, отделить элементы надежности арбитров и судейской деятельности.

2. С помощью теоретического анализа обосновать структурные особенности соревновательной деятельности футбола и современные требования подготовки футбольных арбитров.

3. С помощью теоретического анализа и по фактам понять причины ошибочных решений арбитров во время футбольных поединков.

4. С помощью тестовых и лабораторных исследований диагностировать психомоторные и личностные данные высококвалифицированных и

низкоквалифицированных арбитров, не исключая и половые особенности испытуемых.

5. С помощью корреляционного анализа выявить наиболее надежные связи в значимости личных факторов, психомоторных способностей и психической надежности футбольных арбитров разных квалификаций.

6. С помощью данных, полученных от эмпирических исследований, обосновывать необходимость внедрения в систему подготовки футбольных арбитров специальную психологическую подготовку.

Научная новизна исследования. Выяснилось, что судейские ошибки психологического плана в большинстве случаев происходят в штрафной площадке, и в связи с этим предлагаем новый футбольно-психологический термин - «зона чрезвычайной экстремальности».

Теоретическая значимость исследования. Теоретическая значимость исследования проявляется в оптимальном осуществлении футбольной деятельности судьями, личностными качествами футбольных арбитров, уровнем психической надежности и обследованием взаимосвязи этих качеств. Научно был доказан и системный комплексный подход психологической подготовки футбольных арбитров.

Практическая значимость исследования заключается в том, что в процессе профессиональной подготовки и в процессе усовершествования психологической подготовки футбольных арбитров осуществление системных методов обеспечит: а) резкое повышение общей и специальной психологической подготовки футбольных арбитров, б) развитие и правильное оценивание психомоторных процессов, психических способностей, повышение личностных качеств, стрессоустойчивости, в труднейших и чрезвычайных ситуациях обеспечение надежной деятельности, предчувствие и предвидение различных трудных ситуаций.

Достоверность и надежность. Полученные результаты определяются методологическими принципами, положенными в основу исследования, теоретическим анализом поставленных проблем, адекватностью методов и методик исследования для достижения цели и задач научной работы, обеспечением репрезентативности выборки, применением методов математической статистики для обработки полученных данных.

Структура и объем работы. Диссертация состоит из введения, пяти глав, общих выводов и предложений, списка литературы и приложения. Основная часть работы изложена на 147 страницах, содержит 25 рисунков, 10 таблиц.

Работа завершается общимы выводами и предложениями.

По теме диссертации опубликовано 12 статей.

ARMAN E. GEVORGYAN
PSYCHOLOGICAL FACTORS CONDUCT RELIABILITY OF ARBITER ACTIVITY
(EXAMPLE OF FOOTBALL)

Dissertation for acquiring psychological sciences degree. Area of specialisation 19.00.01 – "General Psychology, Theory and History of Psychology, Personality Psychology."
The dissertation defence will be beld on the 18 of June, 2019 at 12:30 at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan during theb session of functioning HCC Psychology 064 Specialized Council
(Address: 17 Tigran Mets, 0010 Yerevan)

Summary

The relevance of the study. The mistakes committed by referees are among the major issues in the world football. Our research has been taken up for the purpose of exploring into the main reasons of football referees' fallacy. It turned out that the absence of methods developed for psychological training of football referees is sometimes deemed to be the reason of low level of refereeing, it is also the main reason of inadequate reliability of football referees' activities. This fact is reckoned to be the basis of the relevance of our thesis.

The purpose of the study. The detection of psychological components which promote referees' reliable activity, understanding of key features of systematic professional training of football referees through a complex research of individual-psychological characteristics of the respective scope of professionals.

The hypothesis of the research. It is supposed that football referees' reliable activities can be guaranteed providing the appropriate psychological aspect is included in the process of complex preparation system, especially, leading towards the study of motor data (reaction type), of personal qualities (determination, courage, emotional stability, stress resilience) and of psychological qualities (visual memory, attention).

The major issues covered in the thesis are as follows:

1. Analysis of different points of view of theoretical basics and principles of the research of reliability problems, separation of elements of referees' reliability and of referees' activity;
2. Justification of structural characteristics of competitive activity in football, as well as, of the contemporary requirements of football referees' training via the relevant theoretical analyses;
3. Appropriate understanding the reasons of referees' erroneous decisions during football matches according to the respective fact-gathering and theoretical analyses;

4. Proper diagnosis of professional and non-professional referees' psychomotor and personal data, taking into account the test subjects' gender characteristics and with the help of further test and laboratory studies;
5. Detection of more reliable links, detection of the importance of football referees' personal factors, psychomotor abilities and psychic reliability – with different qualifications – through the correlation analyses;
6. Justification of the need for implementation of special psychological preparation in the preparation system of football referees using the data received from empirical studies.

The scientific novelty of the research. As it was detected, in the majority of cases, the psychologically motivated mistakes derive from referees in the penalty area. In this connection, we have offer a new football-psychological term "The Zone of Extreme urgency".

The theoretical implication of the research. The theoretical significance of our research is manifested in the optimal implementation of football activities with the help of referees' personal qualities, psychological reliability and of the survey into the relationship of the above-mentioned qualities. The systemized complex approach of football referees' psychological preparation has been scientifically proved.

The practical significance of the research. The implementation of systemized methods in the process of professional training and improvement of psychological preparation will provide: (a) substantial increase in football referees' general and special psychological preparation, (b) development and correct evaluation of psychomotor processes, psychic abilities, personal quality increase, stress resilience intensification, provision of reliable activities in the most difficult and extreme situations, premonition and foresight in different difficult situations.

The credibility and reliability of the results gained are determined through underlying essential methodological principles and with the help of theoretical analysis of the related issues, adequacy of methods and techniques towards purposes and issues of professional activities, sampling representativeness, application of mathematical statistics methods for processing of the results obtained.

The structure and volume of the thesis. The dissertation consists of introduction, five chapters, general conclusions and suggestions, as well as bibliography and appendices. The overall content of the research is introduced on 147 pages.

The research work is completed with general conclusions and suggestions.

12 articles are published on the themes relate.